ՕԲՅԵԿՏԻՎԸ ԵՎ ՍՈՒԲՅԵԿՏԻՎԸ ՊԱՏՄԱԿԱՆ ՓԱՍՏԻ ՏԱՐԲԵՐ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՌԱԶՄԻԿ ՏԻԳՐԱՆՅԱՆ

Բանալի բառեր - Պատմական փաստ, փաստի ճշմարտացիություն, իստորիզմ, հերմենևտիկա, փաստի չեզոքություն, թեորետիզմ, փաստի ինֆորմատիվ ամբողջականություն:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդի պատմագրությունը նախկինի պես բազում խնդիրների և դրանց տրվող պատասխանների մշտական որոնումների մեջ է: Կասկածից վեր է, որ պատմագիտության իմաստային հիմքը պատմական փաստերն են, որոնց գոյաբանական և իմացաբանական հիմնախնդիրներին գիտական ճանաչողության տեսության և մեթոդաբանության մեջ առանձին ուշադրություն է դարձվել: Պատմական փաստի նկատմամբ հետաքրքրությունը կարևորվում է ինչպես պատմական ճանաչողության օբյեկտների իմացաբանական, տեղեկատվական նշանակությունից ելնելով, այնպես էլ տեսական ու պրակտիկ, իրավական ու քաղաքական, մշակութային-էթնիկական գործոններից ելնելով: Այդ մակարդակներում է, որ պատմական փաստը դադարում է միայն ու միայն իմացաբանական երևույթ լինելուց, ստանալով արժեքային նշանակություն: Ժամանակակից հասարակության մեջ տեղի ունեցող փոփոխությունները հանգեցնում են անցյալի իրադարձությունների մեկնաբանման մի շարք շեշտադրումների փոփոխությանը, գոյություն ունեցածի մասին նոր պատկերացումների ձևավորմանը:

ՓԱՍՏԻ ՏԵՍԱԿԱՆ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ՏԱՐԲԵՐ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐՈՒՄ

Պատմական փաստը անցյալի մասին ռեալություն է, որն իր վրա է կրում ժամանակի հետքը՝ իրականությունն արտացոլելով տվյալ ժամանակի սոցիալ-տնտեսական, իրավա-քաղաքական, բարոյական ու գեղագիտական պատկերացումների և այդ հուշարձանը ստեղծած մարդկանց կենսական շահերի պրիզմայի միջով: Պատմական փաստը կոնկրետ ամբողջ է՝ օժտված բազմազան մոդելային գեներով և միաժամանակ ներքին միասնությամբ: Պատմական փաստի բովանդակության մեջ համադրվում

են օբյեկտիվ և սուբյեկտիվ տարրերը, տվյալ սկզբնաղբյուրը բացատրող սխեմաները, պատմաբանի սոցիալական որակները և հատկապես ընդհանուր գիտական պատրաստվածությունը: Պատմական փաստը լինելով իմացության օբյեկտիվ հիմք, կարող է կատարել ճշմարտության չափանիշի գործառույթ՝ պատմագիտական եզրակացությունների, դրույթների և առավելապես կոնվենցիոնալ հիմնավորումների համակարգում:

Պատմական փաստին, որպես առանձնահատուկ իմացաբանական երևույթի, առանցքային տեղ է հատկացվել պոզիտիվիստական փիլիսոփայության մեջ: Օ. Կոնտը, Դ. Միլը և այլ պոզիտիվիստ փիլիսոփաներ պատմական փաստը դիտարկում են որպես գիտելիքի աղբյուր, օբյեկտիվ ռեալության տարր:

Արևմտաեվրոպական պատմագիտության վրա 19-րդ դարի վերջերին պոզիտիվիզմն ունեցավ գերիշխող ազդեցություն: Պատմական փաստի մասին փոքր-ինչ այլ մեկնաբանություն է տվել նեոպոզիտիվիստական դպրոցը: Լ. Վիտգենշտեյնը և Բ. Ռասելը փիլիսոփայական մտքի նորագույն պատմության մեջ առաջիններից են, որոնք փորձել են տալ պատմական բացատրության տրամաբանական սխեման: Պատմական փաստերը Լ. Վիտգենշտեյնը և Բ. Ռասելը դիտարկեցին ընդհանուր տրամաբանական օրենքների լույսի ներքո: Լ. Վիտգենշտեյնը մասամբ գիտելիքի հավաստիության հարցը դիտարկեց երկընտրանքային կոնցեպտուալ համակարգերից կախվածության կոնտեքստում:

Իր հերթին հետպոզիտիվիստական փիլիսոփայության համար ի դեմս Կ. Պոպերի, Պ. Ֆոյերբանդի, բնորոշ է հակումը դեպի «տեսականացումը» և «սուբյեկտիվիզմը», ինչը որոշակի իմաստով ուղեկցվում էր փաստերի մասին գոյություն ունեցող ավանդական պատկերացումների փոփոխություններով: Կ. Պոպերի համոզմամբ հենց պատմական հայեցակարգերն են պատասխանատու տեսական-սոցիալական գիտությունների անբավարար զարգացվածության համար[1]:

Պատմական փաստի մեկնաբանման աքսեոլոգիական հարցադրումներին հանդիպում ենք հատկապես Վ. Վինդելբանդի, Գ. Ռիկերտի և այլոց աշխատություններում, որոնք պատմությունը վերլուծում են առավելապես անհատական-արժեքային տեսակետից: Հայտնի է, որ պատմագիտության խնդիրը մարդկային հասարակության առանձնահատկությունների, օրենքների բացահայտումն է, որը թույլ է տալիս նաև կանխագուշակել հասարակության զարգացման տրամաբանությունը:

Պատմականությունը առաջացել է դեռևս անտիկ փիլիսոփայության մեջ (Հերակլիտ, Պլատոն) իսկ 19-րդ դարում այն ծաղկում ապրեց Հեգելի,

---

[1] Տե՛ս **Поппер К.,** Нищита историцизма, М, 1993, с. 165.

Կ.Մարքսի, Ջ. Միլի, Օ.Կոնտի և ուրիշների աշխատություններում: Մասնավորապես, Միլը խոսելով իր մեթոդի մասին, այն բնութագրում է պատմության ընդհանուր փաստերի ուսումնասիրության ու վերլուծության հիման վրա առաջընթացի օրենքները բացահայտելուն միտված յուրահատուկ փորձ: Օրենքներ, որոնք կարող են թույլ տալ կանխատեսել ապագա իրադարձությունները մաթեմատիկական ճշգրտությամբ, չնայած այն բանին, որ երբեմն որոշ հեղինակներ կասկածանքով են վերաբերվել պատմության մեջ օրենքների գոյության գաղափարին (օրինակ՝ Պոպերը և ուրիշները), այս հարցում զգալի տարբերություններ տեսնելով պատմական, տեսական և ընդհանրացնող գիտությունների միջև: Բանն այն է, որ տեսական, ընդհանրացնող գիտությունները զբաղվում են ունիվերսալ հիպոթեզների ստուգմամբ, իսկ կիրառական ընդհանրացնող գիտությունները՝ կոնկրետ իրադարձությունների կանխատեսմամբ, մինչդեռ, պատմական գիտությունները զբաղվում են կոնկրետ, առանձնահատուկ իրադարձություններով և նրանց բացահայտումներով: «Մեր տեսակետից, - գրում է Պոպերը,- իրոք չի կարող լինել ոչ մի պատմական օրենք: Ընդհանրացումները պատկանում են այնպիսի գիտական ընթացակարգերին, որոնք պետք է խիստ տարբերակեն առանձին իրադարձությունների վերլուծությունը և նրանց պատճառական բացատրությունները: Պատմության խնդիրը հենց առանձին իրադարձությունների վերլուծությունը և նրանց պատճառական բացատրությունն է: Նրանց համար, ում հետաքրքրում են օրենքները, պետք է դիմեն ընդհանրացնող գիտություններին, օրինակ, սոցոլոգիային»[1]:

Այն, որ պատմաբանները հետաքրքրվում են եզակի, յուրահատուկ փաստերով և իրադարձություններով, այլ ոչ թե օրենքներով կամ ընդհանրացումներով, միանգամայն համատեղելի է, ենթադրում է Պոպերը, գիտական մեթոդի և մասամբ իրադարձությունների պատճառական կապերի բացատրության հետ: Սակայն պատմական գիտությունները համընդհանուր օրենքների նկատմամբ ունեցած իրենց հարաբերություններում մեկուսացված չեն գործում և ամեն անգամ, երբ խոսքը վերաբերում է ընդհանուր կամ եզակի պատմական փաստերին, դրանք հանդես են գալիս դիալեկտիկական միասնության մեջ: Իսկ կարո՞ղ է մարդը փոխել հասարակության զարգացման օրենքները:

Մյուս կողմից՝ պատմականությունը տուրք տալով նատուրալիզմին, ձգտում է հասարակական գիտությունների ոլորտ տեղափոխել բնական գիտությունների մեթոդները: Նա պնդում է. եթե բնագիտությունը կարող է

[1] **Поппер К.** Нищета историцизма.М.,1993, с. 165

կանխագուշակել բնության մեջ տեղի ունեցող երևույթների ընթացքը, ապա պատմությունը, լինելով գիտություն, ինչու չի կարող կանխագուշակել, օրինակ, հեղափոխությունները: Այլ կերպ ասած այս դրույթը կարող է ձևակերպվել այսպես. եթե գիտության գործառույթը նաև կանխատեսումն է, ապա հասարակական գիտությունների խնդիրը պետք է լինի հասարակության, պատմության մասին կանխատեսումները:

Պոպերը ընդհակառակը՝ կարծում է, որ պատմաբանը «… կարող է միայն բացատրել հասարակության զարգացումը և օգնել նրան զանազան եղանակներով, սակայն խնդիրը այն է, որ ոչ ոք չի կարող այն փոխել»[1]:

Պատմականությունը չի մղում մարդկանց դեպի անգործության, պասիվ, կրավորական կեցվածքի կամ ճակատագրապաշտության, միաժամանակ պնդելով, որ սոցիալական փոփոխություններին ցանկացած միջամտության փորձ ապարդյուն է: Պատմականությունը մարդու անհատական կյանքի հիմնական խնդիրը համարում է այն, որ նա պատմության օբյեկտիվ նպատակների իրականացման համար պետք է լինի կամավոր գործիք: Եթե մարդը սկսի պայքարել օբյեկտիվ գործընթացների դեմ, ապա միևնույն է, նա չի կարող կանգնեցնել կամ փոխել պատմության ընթացքը: Պատմականությունը առանձնացնում է հետևյալ երկու նշանակությունները. նախ՝ ներկայի պայմանավորված լինելը անցյալով և երկրորդ՝ անցյալի և ապագայի պայմանավորված լիելը ներկայով:

Նման մեկնաբանության համար որպես ելակետ է ընդունվում պատմական ժամանակաշրջանների հերթափոխության գործընթացում այս կամ այն ժամանակաշրջանի կատարած որոշիչ դերակատարության փաստը: Ներկայի համար անցյալի որոշիչ դերը կարող է մեկնաբանվել առնվազն մի քանի ասպեկտներով. առաջին՝ որպես կաուզալ որոշակիություն (ներկան հետևանք է, որի պատճառը անցյալի իրադարձությունն ներն ու փաստերն են), երկրորդ՝ որպես ավանդույթներով պայմանավորված որոշակիություն, երրորդ՝ որպես հասարակության օրենքներով պայմանավորված որոշակիություն: Այս մեկնաբանությունները տարբեր հայեցակարգերում ամենատարբեր համադրություններով են արտահայտվում: Այսպես՝ ներկան ապագայով բացատրելը կարելի է վերագրել թելեոլոգիական որոշակիությանը (ներկան միջոց է նպատակին՝ ապագային հասնելու համար կամ ներկայում հասունանում են ապագային հասնելու նախադրյալները): Ապագան ներկայով որոշված լինելը կարող է ընկալվել որպես կաուզալ որոշվածության, կապերի կամ ապագայի համար մի շարք ոչ պարտադիր կաուզալ նախադրյալների պատրաստում: Առավել բարդ է մեկնաբանել ներկայով անցյալի որոշվածության

[1] **Поппер К.** Нищета историцизма. М.,1993, с. 62.

դրույթը, քանի որ այստեղ չի կարող խոսք լինել կաուզալ կապերի մասին, բայց կարելի է խոսել թելեոլոգիական որոշվածության մասին (ներկայի արժեքները որոշում են, թե ինչպես պետք է մեկնաբանվի անցյալը):

Իհարկե, անցյալի մասին պատմիչների ու պատմաբանների պատկերացումները, նրանց նկատմամբ արժեքային-գնահատողական վերաբերմունքը մշտապես փոխվում են, որոնք հաճախ բացատրվում են ոչ թե անցյալի մասին նոր փաստերի, իրադարձությունների իհայտ գալով, այլ ներկայի մեկնաբանությունների և արժեքների փոփոխությունների ուժով:

Ոչ միայն ներկայով ապագան ուղղորդելու, այլև անցյալը ներկայով բացատրելու գաղափարները սկիզբ դրվեցին 19-րդ դարի վերջին-20-րդ դարի սկզբին: Դեռևս Ֆ. Շլեյերմախերը՝ ժամանակակից հերմենևտիկայի հիմնադիրը, պատմական իրադարձությունները նկարագրելիս պահանջում էր, որ հետազոտողը պատկերացնի իրեն այն պատմական անհատի դերում, որի գործունեությունը նկարագրվում և գնահատվում է, ավելին՝ հետազոտողը պարտավոր է հասկանալ նրան ավելի լավ, քան ինքն է իրեն հասկանում: Այդ դեպքում, ենթադրվում է, որ ժամանակակից մեկնաբանողը, դիտարկելով անցյալը իր առանձնահատուկ ներկայից, ի վիճակի է դուրս գալ իր ներկայից և «հայտնվել» անցյալում, «նույնականացնել» իրեն ուսումնասիրվող պատմական անհատների հետ: Այստեղ խոսքն այն մասին է, որ պատմաբանը միշտ յուրատեսակ «երկխոսություն» է սկսում անցյալի հետ: Բանն այն է, որ մի կողմից պատմական իրադարձությունները շարունակում են մեզ վրա ազդել նոր պատմական փաստերի բացահայտումներին զուգահեռ, մյուս կողմից նաև ժամանակակից խնդիրները կարող են լուսաբանել չբացահայտված կամ մինչև վերջ չլուսաբանված պատմության զանազան կողմերը: Այսինքն՝ թափանցել անցյալի մշակույթի, փաստերի և իրադարձությունների տրամաբանության մեջ:

Մինչդեռ, արդեն Օ. Շպենգլերի մոտ զանազան մշակույթները չեն թափանցում միմյանց մեջ, այնպես, որ ավելի ուշ շրջանի մշակույթի կրողը չի կարող ադեկվատորեն իրեն պատկերացնել անցյալ դարձած մշակույթի ներկայացուցիչ և չի կարող ամբողջությամբ հասկանալ նրա մտածելակերպը, հույզերն ու ապրումները, գոծողությունների մոտիվացիան: Ներկան, որի սահմանները համընկնում են մշակույթների սահմանների հետ, կանխորոշում են անցյալի ոչ ադեկվատ իմացության անհնարինությունը, որով առաջին հերթին կարող է կասկածի տակ դրվել փաստի օբյեկտիվության հանգամանքը:

Փաստի օբյեկտիվությունը պատմական է, և ուղղակի կապված է նաև պատմական այն դիրքորոշման հետ, որից ելնելով հետազոտողը

փորձում է վերարտադրել անցյալը: «Չէ՞ որ մենք ևս հարկադրված ենք տեսնել և մեկնաբանել նախկին մտածելակերպը որոշակիության հորիզոնից, այսինքն՝ մեր մտածողությունից,- գրում է Մ.Հայդեգերը,- ...մենք չենք կարող դուրս գալ մեր պատմությունից և մեր «ժամանակից», դիտարկենք անցյալը բացարձակ դիրքերից...: Տվյալ պատկերացումների ճշմարտության հարցը ավելի հեռու է գնում, քան աղբյուրներից օգտվելու և կիրառելու պատմական կոռեկտության հիմնախնդիրը: Այն առնչվում է պատմության մեջ մեր դիրքորոշման ճշմարտացիությանը և նրա իրադարձությունների նկատմամբ վերաբերմունքի հիմնադրմանը»[1]:

Հայդեգերը, գրեթե նույն հետևողականությամբ, ինչ Շպենգլերը, պնդում է տարբեր մշակույթների չփոխներթափանցման և փոխադարձ չհասկացվածության թեզը: Օտար մշակույթներին հաղորդակից լինելու, մերձենալու միակ ձևը ինքնուրույն, սեփական ներքին պատմության մեջ խորամուխ լինելն է և յուրաքանչյուր անգամ այն նորովի իմաստավորելը: Ինքնուրույն մտածողի դիրքորոշումը, ինչ էլ որ լինի՝ եզակի է, միաժամանակ պատմության լիարժեք և համակողմանի մեկնաբանություն կարող է լինել:

Պատմական փաստերի հետազոտություններում ներկայի դերի մասին Ռ. Կոլինգվուդը գրում է, որ «յուրաքանչյուր ներկա տնօրինում է սեփական անցյալը և անցյալի պատկերացումների ցանկացած վերափոխում նպատակաուղղված է վերափոխել այդ ներկայի անցյալը…: Սկզբունքորեն ցանկացած նման ակտի նպատակը «այստեղ և այժմ» ընկալվող ամբողջությունը կիրառվում է պատմական անցյալի մասին տրամաբանական եզրակացության համար, որի զարգացումը հանգեցրել է նրա առաջացմանը»[2]: Ըստ Կոլինգվուդի, այդ նպատակին երբեք հնարավոր չէ հասնել, քանի, որ ներկան երբեք հնարավոր չէ ընկալել իր ամբողջությամբ, իսկ անցյալի փաստական նյութը երբեք հնարավոր չէ ներառել ու բացահայտել լրիվությամբ: Անցյալը ամբողջությամբ հասկանալու ցանկությունը, ելնելով ներկայից, անիրգործելի է պրակտիկայում, ինչը պատմությունը դարձնում է «բարոյական իդեալի ձգտում, երջանկության որոնում»:

Պատմության հիմնական պարադոքսը այն է, որ մի կողմից՝ այն ոչինչ չի սովորեցնում (ավելի ճիշտ՝ ձգտում է չսովորեցնել ժամանակակիցներին), իսկ մյուս կողմից՝ հետաքրքրություն է ներկայացնում այնքանով, որքանով որ թույլ է տալիս ավելի հստակ հասկանալ ներկան և ավելի հիմնավոր պատկերացնել ապագան[3]:

---

[1] **Heideger M.** Der europaische Nihilismus.Pfulingen,1967, p. 90-91.

[2] **Коллингвуд Р.** Идея истории. Автобиография.М.,1980, с. 53.

[3] Տե՛ս՝ **Ивин А.** Философия науки, ч 1.М., 2021, с. 100.

Քննելով անցյալի փաստերը և միայն անցյալը, պատմաբանը չի կանխագուշակում, չի տեսնում ապագան: Միաժամանակ նա գիտակցում է, որ «ժամանակից շեղված» դիրքերից պատմություններ գրելը ժամանակավրեպ է դառնում և ժամանակաշրջանների փոփոխության հետ փոխվում է նաև անցյալի մասին պատկերացումը, այնպես, որ նրանից պահանջվում է նոր ներկային համապատասխան պատմության նոր մեկնաբանություն: Գուցե պարադոքսի լուծումը պատմության անընդհատ վերաշարադրումն է, թեև անցյալը որպես այդպիսին, շատ գիտնականների համար անփոփոխ կարող է թվալ: Պատմության մեջ հաճախ ձգտում են անցյալը վերագնահատել ներկայի լույսի ներքո, հատկապես փակ հասարակարգերում: Մասնավորապես, ամբողջատիրական համակարգերը չեն տարանջատում անցյալը ներկայից և ապագայից, անցյալը ներկայացվում է ներկային ադապտացնելու քողով:: Այս տրամաբանությունը նշանակում է, որ ներկայի փոփոխության հետ անխուսափելիորեն պետք է փոխվի նաև անցյալը, որոշակի տրանսֆորմացիայի ենթարկելով փաստերն ու նրանց մեկնաբանությունները: Այսպիսով, գրեթե յուրաքանչյուր սերունդ իր քաղաքական փիլիսոփայության, աշխարհայացքի, պատկերացումների, իդեաների, իրավաքաղաքական գաղափարների ազդեցության ներքո հաճախ նորովի է ընկալում և մեկնաբանում պատմական փաստերն ու վերաշարադրում պատմությունը:

ՓԱՍՏԻ ՃՇՄԱՐՏԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ

Պատմական փաստի ամենակրեատիվ հատկանիշը նրա ճշմարտացիությունն է: Փաստի ճշմարտացիության հասկացությանը մշտապես եղել է հետազոտողների, պատմիչների ուշադրության կենտրոնում: Այս հարցում գոյություն ունեն մի շարք կարևոր առանձնահատկություններ, որոնք հաճախ դուրս են մնում հետազոտողների ուշադրությունից: Չխորանալով ճշմարտության սահմանումների մեջ, միայն նշենք, որ դրանք ոչ այլ ինչ են, եթե ոչ վերացական կոնկրետացումներ, որոնք մասնավորապես ենթադրում են ճշգրտել «իրականության համապատասխանություն» միտքը: Նման կոնկրետացումների անհրաժեշտությունը հատկապես նկատելի է, երբ խոսքը վերաբերում է մասնավորապես պատմական փաստերին, արագ փոփոխվող իրարձություններին կամ ընդհանրապես գոյություն չունեցող օբյեկտներին:

Հայտնի է, որ անցյալը ևս գոյություն չունի ներկային զուգահեռ և չի կարող հետազոտվել ներկայից անկախ: Այդ դեպքում ի՞նչն է մեզ թույլ տալիս ձեռքի տակ ունենալով այս կամ այն փաստերը, դատել անցյալի ի-

բադարձությունների ճշմարտացիության մասին: Ինչի՞ հետ են ներկայում համադրվում այդ մտքերը: Իհարկե, այս հարցերին կարելի է տարբեր կերպ պատասխանել, սակայն մեծամասամբ մեկնաբանությունների հիմքում ընկած են նախ՝ անցյալի ու ապագայի երևույթների պատճառահետևանքային կապերը, և երկրորդ՝ երևույթների օբյեկտիվությունը:

Վերջինս սուբյեկտի աշխարհայացքային պատկերացումներից, կարծիքից, հայացքներից, շահերից, ճաշակից, նախասիրություններից և այլ գործոններից անկախ փաստացի գոյությունն է: Օբյեկտիվությունը ենթադրում է առանց կանխակալ մոտեցումների ուսումնասիրել փաստի էությունը, ներկայացնել, հասկանալ օբյեկտը այնպես, ինչպես գոյություն ունի: Օբյեկտիվությունը ենթադրում է, որ հետազոտողը պետք է ձերբազատվի փաստի մասին նախօրոք ունեցած տեսակետներից, հակումներից: Միևնույն ժամանակ չպետք է մոռանալ, որ բացարձակ օբյեկտիվություն գրեթե հնարավոր չէ ոչ մի ոլորտում, ներառյալ նաև անցյալի փաստերին վերաբերող գիտական ճանաչողության մեջ: Մինչդեռ, եթե օբյեկտիվության սկզբունքը մի կողմ է դրվում և փոխարինվում է փաստերի կամայական մեկնաբանության կամ հաճախ զանգվածային նենգափոխման երևույթով, ապա նման դեպքում այն վերածվում է իրականության հետ կապ չունեցող կեղծ գիտության և քարոզչության: Ասվածի բնորոշ օրինակ է ադրբեջանական պատմափիլիսոփայական գիտության և քաղաքական մոտեցումները, որոնց գերնպատակն է հայերին ներկայացնել որպես մշակութային ժառանգություն ու պատմություն չունեցող, այս տարածարջանում հայրենիք, հայրենիքի պատմական իրավունք չունեցող, այստեղից-այնտեղից եկած կամ բերված ապաքաղաքական ու ապամշակութային մի զանգված: Այդ քաղականությունն ունի հստակ սահմանված խնդիրներ, առաջնահերթություններ: Հայերի պատմություն չունենալու ու անմշակույթ, անհայրենիք լինելու թեզը հիմնավորելն ու քարոզելն է: Դա մանրամասնորեն մշակված մի պրոպագանդիստական գաղափարաբանություն է, որի գերագույն նպատակն է վերացնել, յուրացնել,, անվանափոխել, իրենց վերագրել փաստերն ու փաստական ժառանգությունը: Իհարկե, հնարավոր չէ իսպառ վերացնել այդ ողջ ժառանգությունը, ինչպես որ կցանկանային, հնարավոր չէ իսպառ վերացնել հայերին, ինչպես որ կերազեին՝ գոնե ներկա իրավիճակում: Ուրեմն անհրաժեշտ է ավելի ճկուն, հաշվարկված և արդյունավետ մոտեցում: Օրինակ՝ Հայաստանում (և անշուշտ ի մասնավորի Արցախում և հարակից տարածքներում) հայերի ոչ վաղ անցյալում ,,հայտնվելը,, հնարանք է: Դրան նվիրված են հարյուրավոր «գիտական» հոդվածներ, որոնցով զբաղվում են ակադեմիաներ և գիտական կենտրոններ՝ այդ թվում և արտասահմա-

նում: Եվ բանը հասնում է նրան, որ պատմական փաստերի այնպիսի կեղծարարությամբ և այն տեմպերով են հասարակությանը փորձում համոզել, որ եթե անցյալ դարի 60-ական թվականներին հայերի «եկվորության» ժամանակը վերագրվում էր արաբական տիրապետությանը, ապա՝ 12-13 դարերին, իսկ մեր օրերում այն հասցվեց 19-րդ դար: Ըստ այդմ՝ մշակութային այն ժառանգությունը, որը ստեղծվել է մինչև 19- րդ դադարը՝ իբր հայկական չէ, աղվանական ժառանգություն է: Եվ եթե քրիստոնեական կառույցները ծիսապաշտամունքային առումով չեն հետաքրքրում մահմեդական ադրբեջանցիներին, ապա դրանք հենց այն են, ինչ պետք են Արդբեջանի միակ պատմական քրիստոնյա հանրույթին՝ ուդիներին:

Սակայն մի բան պարզ է, որ գիտության զարգացման ապագան կեղծ գիտությունների կառուցումը չէ և օբյեկտիվության պարագայում վաղ թե ուշ այն սնանկ է ճանաչվելու, եթե պատմական փաստերը հիմնովին ոչնչացված չլինեն:

Օբյեկտիվությունը նաև պատմական է. կարծիքը ինչ-որ ժամանակաշրջանում կարող է համարվել օբյեկտիվ, իսկ մեկ այլ ժամանակաշրջանում սուբյեկտիվ, հատկապես պատմական իրադարձությունների գնահատականներում և արժևորումներում օրինակները բազմաթիվ են: Թեև գիտությունը ձգտում է օբյեկտիվության, օբյեկտիվը և սուբյեկտիվը, գիտելիքը և հավատը նրանում սերտաճած են, հաճախ միմյանց լրացնում և աջակցում են: Գիտելիքը ամրապնդվում է սուբյեկտի ինտելեկտուալ զգացողությամբ և աշխարհընկալմամբ, ուստի որևէ վարկած գիտության մաս չի կազմում մինչև այն պահը, քանի դեռ ինչ-որ բան չի ստիպում հավատալ փաստին: Մասամբ փաստի նկատմամբ սուբյեկտիվ հավատի հովանու ներքո են իրենց էկզիստենցիալ կարգավիճակն ապահովում առանձին տեսություններն ու հիմնավորումները: Հատկապես դա ակնառու է հին տեսություններից նորին անցնելու ժամանակ:

Որպես կանոն գիտության մեջ փաստերը իմաստավորվում են տեսությամբ և տրամաբանական հիմնավորումով: Պատմության փիլիսոփայության մեջ պատմականի և տրամաբանականի հարաբերակցությանը հատուկ ուշադրություն է դարձրել Ռ. Կոլինգվուդը: Իր “Պատմության գաղափարը” մենագրության մեջ, նա ընդհանրացնելով պատմական հետազոտության մեթոդաբանության հիմնահարցերը անտիկ աշխարհից սկսած մինչև 20-րդ դարի սկիզբը, ներկայացրել է այն որպես հասարակական զարգացման միասնական գործընթաց:

ՓԱՍՏԻ ՉԵԶՈՔՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՒԲՅԵԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Ապացուցման տեսության մեջ ինչպես տրամաբանական, այնպես էլ պատմական փաստը դիտարկվում է որպես գիտական տեսության հիմք: Առաջին հերթին հենց դա է տեսության ճշմարտության հարցը որոշող չափանիշը, ուստի, բնական հարց է առաջանում, թե որքանով է այն անկախ ու անկողմնակալ մեկնաբանում փաստերը և իրականությունը:

Փաստը վերջին հաշվով, պրակտիկ գործունեության արդյունք է, բայց չպետք է մոռանալ , որ արդյունքները նաև իդեալական են և ոչ միայն նյութական: Գիտական փաստի վերլուծությունը հանգեցնում է այն եզրակացության, որ այն չի կարող սպառվել զուտ փորձնական ընկալմամբ, այլ պահանջում է նաև տեսական մեկնաբանություն: Վերջինիս առկայությունը փաստը դարձնում է գիտելիքի տեսակ, նրան հաղորդելով գիտական փաստի կարգավիճակ, խախտելով նրա չեզոքությունը: Գիտության մեջ մեկնաբանող տեսությունների կողմից փաստը տարբեր մեկնաբանություններով օգտագործելը հայտնի և տարածված երևույթ է:

Գիտական հետազոտության ընթացքում տեսությունը և փաստը գտնվում են փոխազդեցության հարաբերության մեջ: Թվում է, թե ասված կոնտեքստում փաստը առավելապես չեզոք, կրավորական կեցվածք է դրսևորում ստուգվող տեսության նկատմամբ, քանի որ մի կողմից տեսությունը փաստ է ,,ստուգվող,, տեսության համակարգում, իսկ մյուս կողմից վերջինս օգտագործվում է տվյալ տեսությունը ստուգելու նպատակով, որը արդյունքում վերածվում է յուրատեսակ տրամաբանական շրջապտույտի: Բայց դրանով հանդերձ գործ ունենք այնպիսի ռեալության հետ, որ տեսության հաստատման խնդրում բուն հաստատվող տեսության կողմից արժևորված փաստը ճշմարտության կարևորագույն չափանիշ է դառնում, մեկնաբանության կարևորագույն բաղադրամաս: Այս երևույթը սովորաբար կարող է ստվերում մնալ մինչև այն պահը, քանի դեռ քննարկման առարկա չի դարձել տեսության և այն հաստատող գիտական փաստի հարաբերությունը: Սակայն, եթե քննարկվում է միևնույն գիտական փաստական նյութի վրա հիմնվող մի քանի մրցակցող տեսությունների խնդիրը, ապա անմիջապես տեսանելի է ստուգվող տեսության ազդեցությունը գիտական փաստի կառուցվածքի վրա:

Անցյալի պատմափիլիսոփայական վերլուծություններում ավանդաբար ուշադրություն է դարձվել պատմական փաստի իմացաբանական էության վրա, փաստերին վերագրելով նաև ինվարիանտության, եզակիության ատրիբուտներ, դրանով իսկ որոշակիորեն տարանջատելով “ի-

բականության փաստը” “գիտության փաստ”-ից: Եթե տվյալ խնդիրը դիտարկենքենք ոչ թե զուտ տեսականորեն՝ պատմության փիլիսոփայության մեթոդաբանության տեսանկյունից, ապա կարող ենք պնդել, որ շատ դեպքերում չարաշահվում է պատմական փաստերի իմացական կողմը, կարևորելով իմացական սուբյեկտիվիզմը, որը հաճախ տարբեր չափաբաժիններով արտահայտվում է զանազան գիտնականների, այդ թվում համաշխարհային համբավ ունեցող մեծությունների մոտ: Ասվածն ավելի առարկայական դարձնելու համար տեղին է անդրադառնալ 20-րդ դարի մեծագույն պատմաբաններից մեկի՝ Թոյնբիի դիտարկումներից մեկին. այսպես՝ հայերի ցեղասպանության խնդրին անդրադառնալով, պնդում է, և որպես “պատմական փաստ” բերում է այն հանգամանքը, թե ցեղասպանությունը հայերի կողմից ազգայնականության արևմտյան գաղափարի որդեգրման հետևանք էր: Սակայն, «ժողովուրդների բռնազավթումը, կեղեքումը, բռնագաղթը, կոտորածները և հատկապես ուծացումը, ցեղասպանությունը, օսմանյան կայսրության մեջ թուրքական իշխանությունների սովորական, շարունակական քաղաքականությունն ու վարքագիծն էին հարյուրամյակներ շարունակ և ո՞ր պատմաբանը կարող է խղճի մտոք պնդել, թե … դրանք հետևանք էին այդ ժողովուրդների անհնազանդության, ազգայնականության, անջատողականության: Մեծ Եղեռնը թուրքական իշխանությունների այդ քաղաքականության ու վարքագծի միանվագ դրսևորումն էր միայն, երբ ներկայացել էր պատեհ առիթը: Նման պատեհ առիթներ նրանք ձեռքից բաց չէին թողնում նաև սերբերի, բուլղարների, հույների, արաբների նկատմամբ: Թոյնբին կարող էր նրանց դասերը ևս ի ցույց դնել իբրև խրատ, բայց չի անում, որովհետև այս դեպքում իր հիմնական թեզիսը կհանգեր անհեթեթության”[1]: Ինչպես տեսնում ենք փաստի ինֆորմատիվ զորությունը առաջին հերթին տրված լինելով նրա մտային բովանդակության կարողության մեջ, Թոյնբին խորամուխ չի եղել Մեծ Եղեռնի պատճառական կապերի բացատրության մեջ, որի պատճառով ոչ ադեկվատ հետևությունների է հանգել:

Ուրեմն, գոյաբանական նման հարթությունում ևս գործում են իմացաբանական եզրակացություններն այն մասին, որ իմացության առարկան մշտապես շատ ավելի հարուստ է, քան առարկայի մասին իմացությունը և, որ ճշմարտությունը գործընթաց է, իսկ պատմության պարագայում այն բազմաթիվ առեղծվածներ է պարունակում՝ առեղծվածներ, որոնք առաջին հերթին կապված են փաստերի ինֆորմատիվ ամբողջ բովանդակության

[1] **Գևորգյան Հ. Ա.** ԱԶԳ, Ազգային պետություն, ազգային մշակույթ, Երևան, 1997, էջ 12-13

խնդրի բացակայության կամ ավելի հաճախ՝ տարբեր հաշվարկներով առաջնորդվող սպեկուլյատիվ մեկնաբանությունների հետ:

Հայտնի է, որ գիտության և փաստի առնչություններում, եթե գիտության ռացիոնալությունը կայանում է նրանում, որ այն ենթարկվում է որոշակի տրամաբանական օրենքների, ապա փաստը ավելի ազատ է, միշտ չի ենթարկվում օրենքին բնորոշ կապերի համակարգին: Ավելին՝ Թ. Կունը և նրա կողմնակիցները գտնում են, որ փաստերը, այդ թվում նորը, ընդհանրապես դեր չեն կատարում տեսությունների ընտրության հարցում: Այդ ընտրությունը իրականացվում է ոչ թե տրամաբանական կանոնների ու փաստերի վրա հիմնված «ռացիոնալ» ընթացակարգերի օգնությամբ, այլ գիտական հանրությանը լավ ծանոթ պարադիգմաների համապատասխան, ուստի փաստի նման «արժեզրկումը» պատահական չէ: Փաստը ինքը որպես գիտելիքի ձև, իրոք, չի կարող լուծել գիտական տեսության ճշմարտացիության հարցը առանց մեթոդի: Այդպիսի մեթոդը, ինչպես կարծում էր Պուանկարեն «հենց փաստի ընտրությունն է»[1]: Գլխավոր պահանջը փաստի նկատմամբ, ասում է նա, պարզությունը և կրկնելիությունն է: Առաջինը թույլ է տալիս բարդ երևույթներից դուրս բերել ինդուկտիվ օրինաչափություններ, իսկ կրկնելիությունը՝թույլ է տալիս դրսևորել ուսումնասիրվող երևույթի օրենքի հատկանիշները, որի հիման վրա հնարավոր է ստեղծել տեսության գիտական նկարագրությունը: Պատմական երևույթների, հասարակությունների և մարդու հետազոտության առնչություններում ժամանակակից պատմա-փիլիսոփայական մտքում գերիշխում են այնպիսի մեթոդներ, որոնք ելնում են պատմության անավարտության, պատմության մեջ մարդու որոշակի դերակատարության սկզբունքից: Այդ մեթոդաբանության գերակշռող գործոնները իրենցով որոշում են պատմական փաստի նկատմամբ անհատի վերաբերմունքը, դիտելով այն ոչ թե զուտ իրային վկայի, որպես իմաստային ռեալության, այլ ներկայի և անցյալի միջև միջնորդված երկխոսության:

Ռ. Կոլինգվուդը գրում է. «իրենք՝ պատմաբանները համոզված են այն բանում, որ իրենց հետազոտական աշխատանքներում ելնում են որոշակի տվյալներից: Տվյալների միջոցով է, որ նրանք հասկանում են նախքան պատմական հետազոտական աշխատանք կատարելը իրենց տրված պատմական փաստերը»[2]: Ընդ որում նրանք հիմնվում են հեղինակությունների հիշողությունների, տեղեկությունների վրա: Պատմաբանի համար հավաստի աղբյուրների տեղեկատվությունները «սուրբ» տեքստերն են, որոնք նա չպետք է փոփոխության ենթարկի, քանի որ դրանք իրա-

---

[1] **Пуанкаре А.** О науке.М.,1983.с.291.

[2] **Коллингвуд Р.** Идея истории. Автобиография.М.1980,с.147.

դարձությունների օբյեկտիվ արտացոլումներն են: Նշանակում է պատմական ճանաչողության ճշմարտության չափանիշը տվյալների համապատասխանությունն է պատմական աղբյուրներին: Կոլինգվուդը գտնում է, որ դա պատրանք է և տուրք է «առողջ բանականության տեսությանը»:

Իրականում, պնդում է նա, ամեն ինչ այդպես չէ: Նախ այն պատճառով, որ պատմագիրն է գրի առնում կամ արտագրում սկզբնաղբյուրը, այլ ոչ թե պատմաբանը: Պատմաբանը սկզբում սկզբնաղբյուրը պատմական քննության է ենթարկում՝ մի կողմ նետելով կեղծիքը, սխալը, ստուգելով թե արդյո՞ք լավատեղյակ է իրադարձություններին ինֆորմացիայի աղբյուրը, ճի՞շտ է արդյոք պատմիչի կողմից պատմությունը ներկայացված: Այստեղ ստուգման չափանիշ են նաև գիտնականի սեփական փորձը և նրա ապրիորի երևակայությունը, որը քննադատական մտածողության տարատեսակ է:

Մյուս կողմից հետազոտողն է փաստի ընտրություն կատարում մի կողմ նետելով այն ամենը, ինչը իրեն թվում է քիչ կարևոր, ոչ հավաստի կամ կեղծիք: Հետևաբար, իր ստեղծագործության համար ինքն է պատասխան կրում, այլ ոչ թե նրա համար հավաստի համարվող սկզբնաղբյուրները: Վերջիններս երբեք չեն պարունակում ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ բոլոր փաստական տվյալները: Նրանցից կարելի է քաղել երբեմն միմյանց հետ չառնչվող առանձին դրվագների, դիպվածների մասին տեղեկություններ, որոնց բացը գիտնականն է լրացնում իր մեկնաբանություններով:

Պատմական իմացաբանության և պատմության փիլիսոփայության հարցադրումներում, հատկապես 20-րդ դարի երկրորդ կեսին կարևորվում է պատմական ստեղծագործության մեջ սուբյեկտի և օբյեկտի հարաբերակցության խնդիրը: Անգլիացի պատմաբան Ե. Կատայի «Ի՞նչ է պատմությունը» աշխատության մեջ, ինչպես նաև պատմական ճանաչողության մեթոդաբանության մեծագույն ներկայացուցիչներից մեկի՝ ֆրանսիացի փիլիսոփա Ռ. Արոնի ստեղծագործություններում նշվում է, որ փաստերը ինքնին վերցված գիտություն չեն այնքան ժամանակ, քանի դեռ նրանք չեն ենթարկվում ընտրության, դասակարգման, ընդհանրացման ու բացատրության:

Սակայն մյուս կողմից հավաստի թվացող սկզբնաղբյուրների փաստերը և օբյեկտիվ իրականությունը նույն բաները չեն: Այն, ինչ պատմաբանը ընկալում է սկզբնաղբյուրից դա բուն իրադարձությունը չէ, դա թղթի, մագաղաթի կամ քարի վրա գրված արձանագրություն է: Հետազոտողը ազատ է այդ ռեալությունը որպես փաստ ընդունելու կամ չընդունելու հրամայականից: Այս հանգամանքի վրա առանձնահատուկ ուշադ-

րություն է դարձրել դեռևս մ.թ.ա. 5-րդ դարի նշանավոր պատմագիր Հերոդոտոսը: Նա աղբյուրների նկատմամբ քննադատաբար տրամադրված լինելով հանդերձ, անհամեմատ ավելի լայն ու գիտական մոտեցում է ցուցաբերում աղբյուրից ստացած նյութը ընթերցողին մատուցելու խնդրում: Հերոդոտոսը գրում է. «Ես պարտավոր եմ հաղորդելու այն ամենը, ինչ պատմում են, բայց այդ ամենին հավատալ, իհարկե, ես պարտավոր չեմ: Այս սկզբունքին կհետևեմ իմ ամբողջ պատմության մեջ»[1]:

Պատմական մտածողությունը հենց այնպես հետազոտողին չի տրվում: Իսկ որպեսզի այն նրան տրվի անհրաժեշտ է որոշակի նախնական պատմական գիտելիքներ, ուսումնասիրվող ժամանակաշրջանի համակողմանի իմացություն և ընդհանրապես պատմական ճանաչողության ճկուն ունակություն: Այդ բոլորի արդյունքում՝ պատմական փաստը պատմական ճանաչողության որոշակի «մտային կառույցի» է վերածվում, որի հենքի վրա բարձրանում է համապատասխան տեսության հայեցակարգը: Ուստի, պատմական տեսությունների կենսունակության գրավականը ոչ միայն պատմական փաստերն են, այլև այն հետազոտողների երևակայության, մտահորիզոնի ուժով ստեղծվող մեկնաբանությունները: Միանգամայն տեղին է նկատում Կոլինգվուդը, որ պատմական փաստի օբյեկտիվությունը զիջում է այդ նույն փաստի նրանց մեկնաբանությանը, պնդելով, որ «փաստերը ոչինչ են, նրանց մեկնաբանությունները ամեն ինչ են», և մտքի վերաբերմունքը իր օբյեկտի նկատմամբ ոչ թե պարզապես միտք է, այլ գիտելիք է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, փաստը պասիվ, անկենդան ամբողջ չէ, այլ կենսունակ, որոշակի գործառույթ կատարելու ունակությամբ օժտված միավոր է և յուրաքանչյուր գիտական հանրություն բարոյական պատասխանատվություն է կրում արժանահավատ փաստերի կիրառման և դրանց բարեխիղճ մեկնաբանման համար: Անցյալի պատմափիլիսոփայական վերլուծություններում ավանդաբար ուշադրություն է դարձվել պատմական փաստի իմացաբանական էության վրա, փաստերին վերագրելով նաև ինվարիանտության, եզակիության ատրիբուտներ, դրանով իսկ որոշակիորեն տարանջատելով «իրականության փաստը» «գիտության փաստ»-ից: Եթե տվյալ խնդիրը դիտարկենքենք ոչ թե զուտ տեսականորեն՝ պատմության փիլիսոփայության մեթոդաբանության տեսանկյունից, ապա կարող ենք պնդել, որ շատ դեպքերում չարաշահվում է պատմական փաստերի իմա-

[1] Հերոդոտոս,Պատմություն ինը գրքից, Երևան, 1986, էջ 432

ցական կողմը, կարևորելով իմացական սուբյեկտիվիզմը, որը հաճախ տարբեր չափաբաժիններով արտահայտվում է զանազան գիտնականների մոտ: Միաժամանակ պատմության կմախքը ոչ այնքան փաստն է, որքան նրա մեկնաբանությունը: Եվ քանի որ գիտությունը հաճախ հիմնվում է ապրիորի երևակայության վրա, ապա այս տեսակետից գիտնականների ստեղծագործությունների միջև չկա ոչ մի տարբերություն, բացի մեկից՝ ստեղծել փաստերի հիման վրա պատմության ճիշտ նկարագիրը:

Размик Тигранян, Объективное и субъективное в различных концептуальных толкованиях исторического факта - Исторический факт – это элемент объективного мира и наше знание о нем . В содержании исторического факта синтезируются объективные и субъективные элементы, данные источников и объясняющие схемы, социальные штампы и общая научная компетентность историка. Имеющие объективную основу исторические факты могут выполнять функцию критерия истины только в рамках конвенционального обоснования положений и выводов исторической науки.

Представление историков о прошлом постоянно изменяютсяю Происходит это главным образом не из-за открытия новых фактов о прошлых событыяхб а в силу изменения истолкования настоящего. Идея определенности не только будущегоб но и прошлого настоящим начала складываться в конце 19- начале 20 в. Еще Ф. Шлейермахер, положивший начало современной герменевтикеб требовал от историка встать на позицию того исторического персонажаб действия которого описываются, и понять его лучшеб чем он сам понимал себя. При этом предполагалось, что современный интерпретаторб смотрящий в прошлое из своего специфического настоящего, способен выйти из своего «теперь « и польностью идентифицироваться с прошлымю.

Но уже у О. Шпенглера разные культуры не являются проницаемыми друг для друга, так что человек более поздней культуры не способен адекватно представить себя индивидом ушедшей в прошлое культуры и не может вполне понять строй мыслей и образ действий последнего. Настоящее границы которого совпадют с границами культуры, предопределяет невозможность адекватного познание исторического факта.

Razmik Tigranyan, Objective and subjective in different conceptual interpretations of historical fact - Historical fact is an element of the objective world and our knowledge of it. The content of historical fact synthesizes objective and subjective elements, source data and explanatory schemes, social stamps and historian's general scientific competence. Objectively based historical facts can perform the function of the truth criterion only within the framework of con-

ventional justification of the provisions and conclusions of historical science. Historians' perceptions of the past are constantly changing. This is not primarily due to the discovery of new facts, but to a change in the interpretation of the present. The idea of certainty not only of the future, but also of the past by the present began to develop in the late 19th and early 20th centuries. Even Schleiermacher F., who laid the foundation for modern hermeneutics, required the historian to take the position of the historical character, whose actions are described, and understand him better than he understood himself. At the same time it was assumed that a modern interpreter, looking into the past from his specific present, is able to step out of his "present" and fully identify with the past. Therefore according to Spengler different cultures are not permeable to each other. So that a person of later culture is not able to adequately present himself as an individual of bygone culture and cannot quite understand the latter's structure of thoughts and course of action. The present, whose boundaries coincide with the boundaries of culture, determines the impossibility of adequate cognition of historical fact.

Ուղարկվել է խմբագրություն 24.10.2022թ.
Գրախոսվել է 03.11.2022թ.
Ստորագրվել է տպագրության 07.11.2022թ.